ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԵՎ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐ

Երևան-0010, Հանրապետության հր. Կառավարական տուն 3

"04" մայիսի 2023թ. N 756-Ա

ՀՐԱՄԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԵՎ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՆԱԽԱՐԱՐԻ 2017 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 18-Ի N 352-Ա ՀՐԱՄԱՆՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության վարչապետի 2019 թվականի հունիսի 1-ի N 659-Լ որոշմամբ հաստատված հավելվածի 19-րդ կետի 20-րդ ենթակետով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավանի համայնքի ավագանու 2023 թվականի ապրիլի 13-ի N 39-Ա որոշումը՝

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ

1. Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և զարգացման նախարարի 2017 թվականի դեկտեմբերի 18-ի «Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավանի համայնքապետարանի աշխատակազմի համայնքային ծառայության պաշտոնների անվանացանկը հաստատելու մասին» N 352-Ա հրամանով հաստատված անվանացանկում (այսուհետ՝ Անվանացանկ) կատարել հետևյալ փոփոխությունները և լրացումները.

1) ուժը կորցրած ճանաչել Անվանացանկի.

ա. համայնքային ծառայության առաջատար պաշտոնների խմբի երրորդ ենթախմբի 4-րդ կետը.

բ. համայնքային ծառայության կրտսեր պաշտոնների խմբի առաջին ենթախմբի 5-րդ կետը.

գ. համայնքային ծառայության կրտսեր պաշտոնների խմբի երկրորդ ենթախմբի 2-րդ կետը.

դ. համայնքային ծառայության կրտսեր պաշտոնների խմբի երրորդ ենթախմբի 1-ին կետը.

2) Անվանացանկի համայնքային ծառայության առաջատար պաշտոնների խմբի առաջին ենթախումբը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր 3-րդ կետով.

«3. քաղաքաշինության, հողաշինության, գյուղատնտեսության և բնապահպանության բաժնի

3) Անվանացանկի համայնքային ծառայության առաջատար պաշտոնների խմբի երրորդ ենթախումբը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր 6-րդ կետով.

«6. քաղաքաշինության, հողաշինության, գյուղատնտեսության և բնապահպանության բաժնի գլխավոր մասնագետ».

4) Անվանացանկի համայնքային ծառայության կրտսեր պաշտոնների խմբի առաջին ենթախումբը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր 6-րդ և 7-րդ կետերով.

«6. քաղաքաշինության, հողաշինության, գյուղատնտեսության և բնապահպանության բաժնի առաջատար մասնագետ

7. քաղաքաշինության, հողաշինության, գյուղատնտեսության և բնապահպանության բաժնի առաջատար մասնագետ»

5) Անվանացանկի համայնքային ծառայության կրտսեր պաշտոնների խմբի երկրորդ ենթախումբը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր 5-րդ կետով.

«5. քաղաքաշինության, հողաշինության, գյուղատնտեսության և բնապահպանության բաժնի առաջին կարգի մասնագետ».

6) Անվանացանկի համայնքային ծառայության կրտսեր պաշտոնների խմբի երրորդ ենթախումբը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր 4-րդ կետով.

«4. աշխատակազմի երկրորդ կարգի մասնագետ»:

5/4/2023

X

ԳՆԵԼ ՍԱՆՈՍՅԱՆ

ՆԱԽԱՐԱՐ՝ Signed by: SANOSYAN GNEL 1710830069 **Գ. ՍԱՆՈՍՅԱՆ**

ք. Երևան